ՀՀ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշակերտների խոսքի զարգացումը տարրական դպրոցում

Կատարող՝ Քիշմիշ Նորսոյան
Բավրայի միջնակարգ դպրոց
դասվար

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

Ներածություն……..…..3

1.Խոսքի զարգացման մեթոդիկա……..4

2.Աշակերտների խոսքի զարգացման նշանակությունը……..…….7

3.Խոսքի զարգացման խնդիրներն ու նպատակները տարրական դպրոցում……..…9

4. Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները……...11

Եզրակացություն……...…….17

Գրականության ցանկ…….….…….18

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Խոսքը մարդկային հասարակության մեջ հաղորդակցման կարևորագույն գործոն է և ինքնահաստատման, սեփական եսը դրսևորելու, մտածողության, աշխարհընկալման կարողությունների զարգացման ամենաանհրաժեշտ միջոցը:

Խոսքի զարգացումը գիտականորեն կազմակերպելու նպատակով զգալի տեղ է տրվել լեզվի ու խոսքի կապակցությանը, խոսքի տեսակների ու դրանց առանձնահատկությունների ուսուցմանը, խոսքի զարգացման սկզբունքներն ու մեթոդները ճիշտ ընտրելու և արդյունավետ ձևերով կիրառելու հարցերին: Խոսքի մշակումը անընդհատ և հետևողական գործընթաց է: Խոսքի զարգացումը իրականացվում է աշակերտների՝ խոսքի միջոցով ինքնարտահայտվելու պահանջի բավարարման միջոցով: Կարևորագույն խնդիր է երեխային իր խոսքի նկատմամբ վստահություն ներշնչելը, նրան անկաշկանդ խոսելու, արտահայտվելու հնարավորություն տալը: Ցանկացած միջամտություն, դիտողություն, որքան էլ այն տեղին լինի, կաշկանդում է երեխային, նվազեցնում նրա արտահայտվելու, խոսելու ցանկությունը, կաշկանդում է նրան: Խոսքը մշակվում և շտկվում է այն գործածելիս, շտկումներն ու հղկումները կատարվում են խաղերի, ներկայացումների, խաղ-վարժությունների միջոցով: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է տարրական դպրոցում աշակերտների խոսք զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել աշակերտների խոսքի զարգացման ուղիները տարրական դպրոցում:

Նպատակն իրականացնելու համար առաջադրվող խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել խոսքի զարգացման մեթոդիկան և աշակերտների խոսքի զարգացման նշանակությունը տարրական դպրոցում,

2.Ներկայացնել խոսքի զարգացման խնդիրները և նպատակը,

3.Պարզել խոսքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները տարրական դպրոցում:

1. Խոսքի զարգացման մեթոդիկա

Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդման հիմնական խնդիրն է դաստիարակել ու կրթել այնպիսի սերունդ, որը կարողանա լիարժեք հաղորդակցվել շրջապատի հետ իր լեզվագործածական լիարժեք ունակությունների շնորհիվ: Մայրենի լեզուն, միաժամանակ լինելով ուսումնասիրության առարկա և միջոց այլ առարկաների ուսուցման համար, կրթության մեջ ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն:

Խոսքի զարգացման աշխատանքներին հիմնավորապես սկսում ենք անդրադառնալ տարրական դասարաններում, երբ աշխատանքներ են կատարվում աշակերտների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության զարգացման, աշխարհայացքի և այլ բարոյականային որակների ձևավորման ուղղությամբ՝ ստեղծելով որոշակի կրթական մակարդակ՝ միջին դպրոցում խոսքի զարգացման աշխատանքները շարունակելու համար:[1]

Մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն էլ տվյալ ժողովրդի գրական կենդանի լեզվի ուսուցումն է, աշակերտների մեջ խոսքի կուլտուրայի մշակումն ու զարգացումը, որովհետև առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել ու իրականացնել երեխայի նորմալ կրթությունն ու դաստիարակությունը:

Լեզուն, խոսքը հասարակական-պատմական զարգացման արդյունք են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ ամենալայն իմաստով: Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները: Երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացումն իրականացվում է գործունեության մեջ, իսկ այդ գործունեության շարժիչ ուժը հաղորդակցման պահանջն է: Շրջապատողների հետ հաղորդակցման պահանջը և սոցիալական միջավայրը երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոններն են: Այդ գործընթացում

[1] Խաչատրյան Հասմիկ, Խոսքի զարգացման փոխհաջորդման սկզբունքը տարրական և միջին դասարաններում, էջ 473 473-482

երեխան պասիվորեն չի ընկալում մեծերի խոսքային կաղապարները, այլ ակտիվորեն յուրացնում է խոսքը՝ որպես համամարդկային փորձի մի մաս։ Ասվածից հետևում է, որ մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է։ Դեռևս վաղ մանկության տարիներին երեխայի մեջ ծագում է հաղորդակցման պահանջմունք, որը տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվում է։ Հետագայում այդ պահանջմունքի բավարարման համար մարդը կատարելագործում է իր խոսքը, ձգտում է տիրապետել լեզվի գանձերին։[2]

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատվում են մարդու խոսքի զարգացման հետևյալ փուլերը.

1. մանկական տարիք (մինչև 1 տարեկան)՝ գեղգեղանք և թոթովանք, մսուրային տարիք (մինչև 3 տարեկան)՝ բառի հնչյունային և վանկային,

2.կառուցվածքի, նախադասության բառերի միջև գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային),

3.նախադպրոցական տարիք (3-ից մինչև 7 տարեկան)՝ մենախոսության և ենթատեքստային խոսքի, պարզ ներքին խոսքի դրսևորում,

4. կրտսեր դպրոցական տարիք (7-ից մինչև 10 տարեկան)՝ խոսքային ձևերի ըմբռնում (բառի հնչյունային կազմ, բառապաշար, խոսքի քերականական կառուցվածք), գրավոր և բանավոր խոսքի, նրանց մատչելի նորմերի տիրապետում, մենախոսելու կարողության բուռն զարգացում,

5.միջին դպրոցական՝ դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝ խոսքի գրական նորմերի, ոճի՝ ըստ ամենայնի տիրապետում, անհատական ոճի ձևավորում,

6. ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք (15-ից մինչև 17 տարեկան)՝ խոսքի մշակույթի կատարելագործում, լեզվի առանձնահատկությունների տիրապետում, անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում։ Մեթոդական այս խնդիրները լուծվում են այն գիտությունների միջոցով, որտեղից մեթոդիկան քաղում է իր համար սկզբունքորեն կարևոր տեղեկատվություններ։ Այդ գիտություններից առաջատարը **լեզվաբանությունն է, հոգեբանությունը և մանկավարժությունը։**

---

[2] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 281։

Լեզվաբանական, հոգեբանական և մանկավարժական տեսությունները հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի տեսական հիմքերն են, հետևաբար խոսքի զարգացման մեթոդիկայի համար հիմնական բազա են։

Խոսքի զարգացման բնագիտական հիմքը մարդու բարձրագույն նյարդային գործունեության երկու ազդանշանային համակարգի մասին Ի. Պ. Պավլովի տեսությունն է։ Խոսքի ֆիզիոլոգիական հիմքերն առարկաների, երևույթների և բառերի՝ մարդու վրա ունեցած ազդեցության շնորհիվ գլխուղեղի կեղևում առաջացող ժամանակավոր կապերն են, որոնցով այդ առարկաներն ու երևույթներն անվանվում են։[3]

Ի. Պ. Պավլովը խոսքն առաջին հերթին դիտում էր որպես խոսքային օրգաններից ելնող 4 կինեսթետիկ արձագանքներ։ Այդ կինեսթետիկ զգացումները նա անվանում էր երկրորդ ազդանշանային համակարգի հիմնական բաղադրիչը։ Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը՝ դրանով ապահովելով նաև գիտության և պրակտիկայի կապը։

Բանավոր խոսքը, բնականաբար, հանդես է եկել գրավորից վաղ՝որպես հաղորդակցման անմիջական պահանջմունք։ Ձևավորման սկզբնական փուլում այդ կարողության զարգացման ուղղությամբ հատուկ աշխատանքի կարիք չի զգացվում։ Այնինչ գրավոր խոսքը յուրացվում է հատուկ ուսուցման ճանապարհով,որի ընթացքում ընդգծվում է բանավոր խոսքի առաջանցիկ զարգացումը։

Գրավոր խոսքի ձևավորումն ու զարգացումը բանավորի համեմատ առավել հագեցված և բարդ գործընթաց է, իրականացվում է դանդաղորեն։ Բանավոր խոսքում օգտագործվող նախադասություններն ավելի ընդարձակ են, նրանցում հաճախ են գործածվում զանազան խոսքային կառույցներ, որոնք բարդացնում են նախադասությունը։

Բանվոր խոսքը իր անմիջականությամբ ու արտահայտչականությամբ, մարդկային հույզերի, ապրումների, տրամադրությունների ու զգացմունքների ճիշտ արտահայտման ու դրանք լսողին փոխանցելու տեսակետից ավելի մեծ

[3] Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009, էջ 282

հնարավորություններ է ընձեռում, քան գրավոր խոսքը, որը միջնորդված խոսակցություն է գրողի և ընթերցողի միջև և չի ուղեկցվում դեմքի արտահայտության ու ձայնի ելևթջների այնպիսի փոփոխությամբ, ինչպիսիք տեղի են ունենում խոսողի խոսելու ժամանակ:

Միևնույն խոսքի գրավոր տարբերակում հնարավոր չէ արտահայտել հոգեբանական դադարները, տրամաբանական շեշտերը, արտասանական երանգավորումները: Եթե բանավոր խոսքում կարևորվում են ուղղախոսությունն ու տարաբնույթ լեզվաարտահայտչամիջոցները, ապա գրավոր խոսքը ծանրաբեռնված է ուղղագրությամբ և կետադրությամ

2. Աշակերտների խոսքի զարգացման նշանակությունը

Խոսքի զարգացումը մեծ կրթադաստիարակչական նշանակություն ունի աշակերտների համար: Ուսումնա-առարկայական խիստ կարևորության հետ միասին այն խոշոր դեր է կատարում աշակերտների ընդհանուր զարգացման ու դաստիարակության գործում:

Աբրահամյան Ս., <<Աշակերտի խոսքի զարգացումը>>[4] գրքում աշակերտների խոսքի զարգացման դերը ամփոփում է հետևյալ կետերում,

1.Լինելով լեզվի ուսուցման հիմնական գործնական նպատակներից մեկը՝ այն միաժամանակ կարևոր միջոց ու հիմք է աշակերտների լեզվական տեսական գիտելիքների յուրացման համար: Լեզվական գիտելիքները սեփական խոսքի մեջ հետևողականորեն կիրառելով՝ աշակերտն ամենօրյա խոսքի մեջ գործնականորեն ամրապնդում է սովորածը և դրանով իսկ ապահովում նրա հիմնավոր յուրացումը: Եվ հնդհակառակը, լեզվական գիտելիքները գործնականում, խոսքի մեջ չկիրառելու և խոսքն ըստ այդ գիտելիքների չկառուցելու դեպքում տեսական գիտելիքները դառնում են ինքնանպատակ, դրանք աշակերտների համար մնում են հողից ու հիմքից զուրկ անառարկայական վերացություններ, հետևապես և չեն ամրակայում նրանց հիշողության մեջ և ըստ էության չեն յուրացվում: Ուրեմն՝ աշակերտների խոսքի

[4] Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան 1973, էջ 4:

զարգացման, խոսքի մշակույթի համար պայքարելը ինքնին պայքար է հայոց լեզվի ուսուցման, այդ թվում և տեսական գիտելիքների հիմնավոր յուրացման համար:

2.Հայտնի է, որ լեզուն մարդկային հաղորդակցման միջոց լինելով հանդերձ, միաժամանակ մտածողության միջոց է: Այստեղից բխում է, որ աշակերտի մտքերը ճիշտ ձևով արտահայտելու, հստակ, դիպուկ ձևակերպելու պահանջը ըստ էության միտքը ճիշտ կառուցելու, ճիշտ ու հստակ մտածելու պահանջ է: Նշանակում է՝ խոսքի զարգացումը իր շատ կողմերով նպաստում է աշակերտի տրամաբանական մտածողության զարգացմանը:

3.Խոսքի բարձր կուլտուրայի համար պայքարը աշակերտի ընդհանուր դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունի: Աշակերտը պետք է բոլոր դեպքերում տարբերի լավը վատից, դրականը բացասականից, ճիշտը սխալից և ձգտի դեպի լավը, դրականը, ճիշտը, գեղեցիկը, կատարյալ: Աշակերտի խոսքի կազմակերպվածության համար պայքարը մեծապես կնպաստի նրա ընդհանուր կազմակերպվածությունը, նրա ակտիվության բարձրացմանը:

4.Գրական, կատարյալ խոսքն անհրաժեշտ պայման է քաղաքակրթության դարաշրջանում ապրող ու գործող մեր այսօրվա ու վաղվա քաղաքացիների կուլտուրական բարձր մակարդակն ապահովելու խնդրում: Պայքարել դպրոցականի խոսքի մշակույթի համար՝ նշանակում է պայքարել նրա կուլտուրական բարձր մակարդակի համար:[5]

5. Վերջապես, աշակերտների խոսքի զարգացումը կարևոր նշանակություն ունի գրական լեզվի մշակման, զարգացման համար: Քանի որ մեր դպրոցը իր բովով անց է կանցում ամբողջ ժողովրդին և այսօրվա աշակերտները մեր վաղվա քաղաքացիներն են, ապա սրանից բխում է, որ ապահովել ամբողջ աշակերտության խոսքի զարգացումը՝ նշանակում է, վերջին հաշվով, ապահովել ամբողջ ժողովրդի լեզվի ընդհանուր մշակվածությունն ու խոսքի կուլտուրան՝ միասնական պահանջներով, մի հանգամանք, որ մեծապես կնպաստի լեզվի մշակմանն ու զարգացմանը: Ահա թե կրթական-դաստիարակչական և նույնիսկ գրական լեզվի մշակման ու զարգացման համար ինչպիսին խոշոր նշանակություն ունի աշակերտների խոսքի զարգացմանը:[6]

---

[5] Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան 1973, էջ 5:
[6] Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան 1973, էջ 6:

3. Խոսքի զարգացման խնդիրներն ու նպատակները տարրական դպրոցում

Ուսումնասիրելով տարբեր հեղինակների աշխատանքները (Գյուլամիրյան Ջ., Տեր-Գրիգորյան Ա., Աբրահամյան Ս.) կներկայացնենք խոսքի զարգացման խնդիրներն ու նպատակները տարրական դպրոցում: Երեխայի խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացումն իրականացվում է գործունեության մեջ, իսկ այդ գործունեության շարժիչ ուժը հաղորդակցման պահանջն է: Շրջապատողների հետ հաղորդակցման պահանջը և սոցիալական միջավայրը երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոններն են: Գոյություն ունեն խոսքի զարգացման հայեցակարգային մոտեցումներով ստեղծված ծրագրեր, ձեռնարկներ, որոնց հիմքում հիմնականում ընկած են խոսքի բաղադրիչները՝ բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն: Սակայն կարելի է ունենալ հարուստ բառապաշար, իմանալ տվյալ լեզվի քերականությունը, հրաշալի տիրապետել խոսք կառուցելու կանոններին, սակայն չունենալ գրագետ, տպավորիչ, համոզիչ և արտահայտիչ խոսք, եթե չունենանք հարուստ, բազմակողմանի զարգացած ներաշխարհ և հաղորդակցվելու ցանկություն: Դրա համար նախ պետք է ստեղծել խոսելու, մտքեր արտահայտելու, դատողություններ անելու և բանավիճելու ցանկություն և հնարավորություն: Աշակերտի խսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի երկու գլխավոր բաժինների հիմնական նպատակներից մեկն է, և ամենևին էլ պատահական չէ,որ մայրենի լեզվի պետական ծրագրի յուրաքանչյուր բաժնի նույնիսկ վերնագրում արտահայտված է այդ:

Խոսքի զարգացման համար երեխայի կրտսեր դպրոցական տարիքը անփոխարինելի է մի ժամանակաշրջան է:

Խոսքի զարգացման նկատառումներից ելնելով երեխայի խոսքում պետք է կարևորել խոսքի բովանդակությունը, տրամաբանությունը, հստակությունը, հարստությունը, արտահայտչականությունը, պարզությունը և ճշտությունը: Երեխան, որը ցանկանում է նկարագրել կամ պատմել որևէ ստեղծագործություն, նա պետք է կարողանա իր ասելիքը ներկայացնել ավարտուն, ամբողջական, խոսքում պետք է պահպանվի մտքերի և դեպքերի հաջորդականությունը: Որպեսզի խոսքը արտահայտիչ լինի, պետք է երեխան

կարողանա իր խոսքում ճիշտ և տեղին օգտագործել որոշ կետադրական և առոգանության նշաններ: Եթե գրավոր խոսքում պահանջվում է քերականական, ուղղագրական և կետադրական կոնոնների պահպանում, ապա բանավոր խոսքում՝ ուղղախոսական կանոնների պահպանում: Դպրոցականի խոսքի զարգացման խնդիրներից ու նպատակներից մեկն էլ նրա բանավոր խոսքում պատմողական, նկարագրական, դատողական և գնահատող խոսքատեսակների կիրառումն ու զարգացումն է, իր բանավոր խոսքում նշված հատկանիշների ճիշտ կիրառում ու արտահայտումը: Երեխան պետք է կարողանա ընթերցած նյութը պատմել կամ վերարտադրել՝ ապահովելով առարկաների կատարած գործողությունների, գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականություն: Պետք է կարողանալ խոսել տվյալ առարկայի կամ երևույթի մասին՝ նկարագրելով դրա հատկությունները, կարողանալ դատողություն կատարել տվյալ երևույթի շուրջ և կարողանալ սեփական գնահատականն ու կարծիքը հայտնել տվյալ առարկայի կամ երևույթի նկատմամբ: Գնահատող խոսքին հատուկ է որոշակի բառապաշար՝ ինքնատիպ շարահյուսական կառույցով: Գնահատող արտահայտություններ կառուցելու համար հաճախ օգտագործվում է կոնկրետ բառապաշար: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում պետք է կարևորել հատկապես արտադասարանային միջոցառումների, մրցույթների կազմակերպմանը, բանաստեղծությունների, հեքիաթների, առակների, պատմվածքների ինքնուրույն ընթերցանությանն ու իրենց բանավոր խոսքում որոշ դարձվածքների, առած-ասացվածքների թևավոր խոսքերի օգտագործմանը: Որպեսզի երեխան կարողանա իր խոսքը կառուցել գրագետ և հարուստ, պետք է կարևորել տվյալ խոսքում հոմանիշ-հականիշ զույգերի, ածականների և այլ լեզվաարտահայտչամիջոցների ճիշտ կիրառումը, որոնք խոսքը ավելի գեղեցիկ են դարձնում:

4. Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները

Խոսքը մտքի գեղանկարչությունն է, նրա գեղագիտական դրսևորումը: Գրագետ և գեղեցիկ խոսքը մտքի կազմակերպվածության արտահայտությունն է: Դպրոցը համարվելով երեխայի կրթությունն ու դաստիարակությունն ապահովող գլխավոր հիմնաքարը, պարտավոր է խստագույնս հետևողական լինել աշակերտի բանավոր խոսքի ճիշտ կառուցման և բարեկիրթ հաղորդակցման կարողությունների ձևավորման հարցում: Շատ հաճախ երեխայի խոսքն է արտացոլում նրա ներաշխարհը և հոգեբանությունը: Սակայն մենք բախվում ենք այն խնդրին, որ չենք կարողանում կարդալ երեխայի միտքը, քանի որ վերջինս չի կարողանում խոսքով ներկայացնել այն, ինչի մասին մտածում է, չունի ձևավորված կայուն բառապաշար և խոսք կառուցելու հմտություն: Բազմազան են բանավոր խոսքի զարգացման հնարները: Դրանց արդյունավետությունը պայմանավորված է նաև ուսուցչի՝ մայրենիին տիրապետելու աստիճանով և սեփական նախաձեռնությամբ մշակված մեթոդների գործունակությամբ: [7]

Որքան ճիշտ ժամանակին փորձենք երեխայի մեջ հղկել խոսքարվեստի տարրերը, այնքան անավարտ իրավունք կնվաճենք մոտենալու մեր ոսկեղենիկ մայրենիի պերճաշուք պահոցին: Եթե երեխայի խոսքն անկատար ու կցկտուր է, բառերի ընտրությունը՝ ոչ համապատասխան և աննկարագրելի, ապա նրա արտահայտած միտքը խեղդված է և անուժ: Եվ այսպես ստացվում է տխուր ու անդառնալի հետք թողնող մի պատկեր.

Երեխաները կյանք են մտնում աղքատիկ բառապաշարով և խոսքագործածության միջոցներից օգտվելու անճարակությամբ: Այս անցանկալի իրողությունը այսօր մտահոգում է թե նախակրթարանների դաստիարակներին, թե դասվարներին, թե հայոց լեզվի ուսուցիչներին: Ներկայումս լեզվական բնականոն համակարգից բազմակի ու բազմամակարդակ շեղումներն աղճատում են լեզուն՝ ստեղծելով վտանգավոր վարքագիծ և հոգեբանություն նույնիսկ կրտսեր դպրոցականների համար: Իսկ գրագետ խոսքի նկատմամբ դրսևորվող արհամարհանքն ընդունել է այնպիսի չափեր, որ դրանից ազատվելը անխոնջ ու

[7] Խումարյան Վ., Բանավոր խոսքի զարգացման և խոսքի մշակույթի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներ, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, N 5.2012, էջ 12:

տքնաջան աշխատանք է պահանջում: Ցավոք այսօր մեզանում իշխում է փողոցային, ժարգոնային խոսվածքի մի այնպիսի խառնուրդ, որը հեղեղի պես թափվում է մեր գլխին: Իսկ ամենատխուր և մտահոգիչ իրողությունն այն է, որ այդ խոսելաձևը կլանել է ամենատարբեր տարիքի ու սեռի մարդկանց, և հնչում է ամենուր՝ տանը, փողոցում, նույնիսկ դպրոցում:

Որքան էլ անհնարին թվա այդ խնդրի լուծումը, մենք պիտի ջանանք փնտրել ուղիներ, որոնք կնպաստեներեխայի խոսքի հղկմանը և բառապաշարի հարստացմանը: Գոյություն ունեն մի քանի առանցքային հնարներ, որոնց կիրառմամբ մեր մանակվարժական գործունեության ընթացքում հասել ենք զգալի հաջողությունների: Դրանք են.

1.Անչափ կարևորվում է ճիշտ ընթերցանությունը: Գոյություն ունի ընթերցանության երեք տեսակ.

Առաջին՝ ուղղակի կարդալ, նույնիսկ առանց հասկանալու /մեխանիկական ընթերցանություն/

Երկրորդ՝ կարդալ մանրամասն ընկալումով

Երրորդ՝ կռահել նույնիսկ այն ինչը գրված չէ:

Շեշտը հարակվոր է դնել ընթերցանության երրորդ տեսակի վրա, որովհետև այն օգնում է աշակերտին՝ ըմբռնելու չգրված տողերի խորհուրդը, խորհելու դրա շուրջ և արտահայտելու սեփական վերաբերմունք: Այդ ընթացքում աշակերտը մտովի կատարում է վերլուծական տարաբնույթ աշխատանքներ, դիմում սեփական բառաֆոնդին, ի վերջո ուսուցչի օգնությամբ և ուղղորդմամբ կառուցում իր խոսքը: Ճիշտ ընթերցանության արդյունքում աշակերտը հայտնաբերում է բառարվեստի նուրբ հնարներ, և ինքն էլ իր խոսքի վերարտադրման մեջ, համապատասխան բառեր օգտագործելով, փորձում է հետաքրքիր մտքեր արտահայտել: Այստեղ տեղին է հետևել Սենեկայի խորհրդին. <<Եթե որևէ բան ընթերցում են, յուրացրու գլխավոր միտքը: Ընթերցելու ժամանակ այն, ինչ ձեռք է բերվում գրչի միջոցով, դառնում է միս ու արյուն>>:

Չի հարստանա աշակերտի բառապաշարը, չի զարգանա բանավոր խոսքը, քանի դեռ ինքը չի թափանցել ուսուցվող բնագրի բովանդակության մեջ: Ուստի պետք է օգտագործել բոլոր միջոցները՝ լեզվական այդ աշխատանքները բարձր մակարդակով

կատարելու համար: Առաջինից չորրորդ դասարանների մայրենիի դասագրքերում զետեղված նյութերը հիմնականում երեխաներին սովորեցնում են լինել ազնիվ, ճշտապահ, աշխատասեր, պարտաճանաչ, հայրենասեր: Դրանք սովորողներին մղում են նմանվել դրական հերոսներին, ընդօրինակել նրանց լավագույն հատկանիշները:

Մայրենի լեզվի հմայքն զգալու համար խիստ կարևոր է արտահայտիչ ընթերցանությունը: Այդ ուղղությամբ երեխաներին պետք է վարժեցնել առաջին դասարանից: Աշակերտը պետք է զգա առոգանության ու տրոհության նշաններին առնչվող դադարների ու հնչերանգի, ինչպես նաև բնագրի բովանդակությունից բխող տեմպի ու ձայնի ելևէջների փոփոխությունը: Ինչպես գիտենք հայերենում բառերի շեշտը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա, սակայն տրամաբանական շեշտն ընկնում է նախադասության այն բառի վրա,ո րի հատկանիշը շեշտվում է:

Բանավոր խոսքի զարգացման, բառակերտման արվեստի ձևավորման յուրահատուկ հնար է նաև **բանավեճը:** [8]

Դասի թեմայի և դրանցից բխող խնդրահարույց իրավիճակին համապատասխանող բանավեճն աշակերտի բանավոր խոսքը հարստացնում է վերլուծական-համադրական և տրամաբանական ու ընդհանրացնող լեզվամտածողության շերտերով: Ձևավորվում է աշակերտի խոսքարվեստը: Բանավեճը մտքի զարգացման և նյութի բազմակողմանի յուրացման կարևորագույն միջոցն է: Այդ ընթացքում աշակերտն արժևորում է սեփական <<ես>>-ը, գիտակցում ինքնահաստատման անհրաժեշտությունը, ինքն իրեն պարտավորված զգում խոսել ճիշտ, գրագետ լեզվով և զարգացնել հաղորդակցական կարողություններ: բանավեճեր կազմակերպում ենք հատկապես այն բնագրերի շուրջ, որոնցում աշակերտները փորձում են բնութագրել հերոսներին՝ արտահայտելով սեական կարծիքները և զարգացնում կապակցված խոսք կառուցելու կարողություններ:

Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացմանը լավագույնս նպաստում է նաև <<Հարց և պատասխանի հինգ րոպե>> հնարը, որն իրականացվում է <<Լեզվաշեն պապիկ>> պաստառի օգնությամբ: պաստառում նկարված է հայագետ պապիկ՝ ուսին՝ հարցերով լի պարկ: Հարցերը վերաբերվում են ուսումնասիրվող

[8] Խումարյան Վ., Բանավոր խոսքի զարգացման և խոսքի մշակույթի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներ, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, N 5.2012, էջ 10-14:

նյութին և գաղափարական բովանդակությանը: Հարցերի միջոցով վեր են հանվում երեխայի ճանաչողական, տրամաբանական, վերլուծական կարողությունները, ապա՝ նրա վերաբերմունքը նյութի շուրջ: Վերջինս էլ դառնում է արժեքային համակարգի ձևավորման հիանալի խթան: Բառապաշարի կայուն շերտի ձևավորման և բառակերտման արվեստի լայն հնարավորություն է ընձեռում նաև <<Բառարան>> լեզվական խաղը, որի միջոցով բառի մեկնությունները տրվում են տարբեր կողմերից:

Որպես <<Բառարան>> ընտրվում է այն աշակերտը, ով աչքի է ընկնում իր գրագետ խոսքով և բառարանային աշխատանքների անթերի կատարումով: Այս խաղ-հնարը երեխայի մեջ արթնացնում է նաև առողջ մրցակցության մղում, քանի որ բոլորն են ձգտում կրել <<Բառարանի>>փառավոր թագը: Արդյունքում բառագիտական գիտելիքները դասարանում դրվում են ամուր հիմքերի վրա: <<Թագադրված>> աշակերտի համար դասընկերները նախապատրաստում են հարցեր, որոնք կարող են ունենալ հետևյալ բովանդակությունը.

1.Միրելի բառարան կօգնես ինձ գտնելու <<ամբարտավան>> բառի հոմանիշը:

2.Իմ խելացի բառարան, ես չգիտեմ ճիշտ գրել <<միջօրե>> բառը, որ ճիշտ ասեմ, չգիտեմ նաև բառի բացատրությունը: Ինձ կօգնես այդ հարցում:

3.բառարան ԱՆին պնդում է, որ <<տիեզերք>> բառը բարդ է և ածանցավոր: Միթե դա հանարվոր է:

Բառարանը պարտավոր է հիմնավոր պատասխաններ տալ աշակերտներին: <<Բառարան>> խաղ-հնարը օգնում է աշակերտներին՝ ճիշտ գտնելու բառի հոմանիշը, հականիշը: Հիշեցնում է ուղղագրական կանոնները, նպաստում բառակազմական վերլուծությունների կատարմանը և այլն: Այս խաղի միջոցով երեխաներին ամրապնդում են յուրացրած լեզվական գիտելիքները և ապահովում համագործակցված աշխատելու կարողություններ: Նմանօրինակ մեթոդական ձևերն ու հնարները նպաստում են աշակերտի բանավոր խոսքի զարգացմանը, գեղագիտական դաստիարակության, լեզվամտածողության ձևավորմանը: Դասի յուրահատուկ ստեղծագործություն է ուսուցիչը՝ յուրահատուկ ստեղծագործող:

Տարրական դասարանում խոսքի զարգացմանը միտված աշխատանքներում պետք է ուշադրություն դարձնել նաև արտասանական վարժություններին:

Աշակերտները պետք է հասկանան, որ միալար ու անկենդան խոսքը, որը չունի զգացմունքային տարրեր, արտահայտիչ չէ, չի կարող հաճելի լինել ունկնդրի համար: Աշակերտների խոսքի զարգացման, կապակցված խոսքի ձևավորման համար կազմակերպվում են տարբեր խոսքային իրավիճակներում խոսք կառուցելու, երկխոսություններ և մենախոսություններ ստեղծելու կարողություններին միտված աշխատանքներ, աշակերտներին հանձնարարվում է վերարտադրել ընթերցած նյութի բովանդակությունը, այն կարդալ դերերով, բեմադրել՝ կիրառելով խոսքային և ոչ խոսքային (դիմախաղ, կեցվածք, ժեստ և այլն) միջոցներ:[9]

Աշակերտի խոսքի զարգացման միջոց են հանդիսանում նաև հոմանիշների և հականիշների, դարձվածքների, ասացվածքների ուսուցումը:

Խոսքի զարգացման նպատակով հանձնարարելի են նաև ընթերցած գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակության տպավորությամբ նկարելու, ստեղծագործության էջը նկարազարդելու և դրանք խոսքով ներկայացնելու ուղղությամբ առաջադրանքները:

Սրանց նպատակն է զարգացնել աշակերտների երևակայությունը, գունային զգացողությունը, զգացմունքները գույների միջոցով թղթին հանձնելու կարողությունը, որոնք կարևոր են խոսքի զարգացման գործընթացում:

Խոսքի զարգացման խնդիրները տարրական դասարաններում իրականացվում են նաև խոսքային այլ միջոցներով՝ հայտարարություն, դիմում, պատմվածք, նամակ և այլն: Սրանք ևս բնագրեր են՝ որոշակի ոճի մտքային և կառուցվածքային մասերով: Եվ երբ երեխաները տարբերում են դրանց առանձնահատկությունները, նրանք մտովի վերլուծում, գնահատում և ստեղծում են առավել հարուստ բառապաշարով տարաբնույթ բնագրեր, նշանակում է նրանց խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքը ճիշտ ընթացք ունի:

Հասմիկ Խաչատրյանը[10], իր հոդվածում ասում է, որ այսօրվա երեխան բավականին առաջադեմ է, առավել տեղեկացված, հետևաբար արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար ուսուցիչը պետք է աշակերտներին նախ հնարավորություն

---

[9] Խաչատրյան Հասմիկ, Խոսքի զարգացման աշխատանքները տարրական դասարաններում՝ որպես միջին դասարանների աշակերտների խոսքի զարգացման անհրաժեշտ նախապայման, էջ 302

[10] Խաչատրյան Հասմիկ, Խոսքի զարգացման փոխհաջորդման սկզբունքը տարրական և միջին դասարաններում, էջ 478

տա արտահայտվելու, որպեսզի ուսումնասիրի նրանց ներուժը, իմացության մակարդակը, այնուհետև, ճիշտ մեթոդ ընտրելով, կազմակերպի ուսուցման գործընթացը՝ աշակերտների մտավոր ունակություններին համապատասխան: Առավել կարևոր է ուսուցման կազմակերպման արդյունավետ մեթոդի խելամիտ ընտրությունը, քանի որ մենք առնչվում ենք մտավոր տարբեր ընդունակությունների տեր երեխաների հետ և բոլորին միևնույն պահանջներին համապատասխան կրթել հնարավոր չէ. դասարանում միայն հաշված երեխաներ կյուրացնեն մատուցված նյութը: Ուսուցչի նպատակը պետք է լինի աշակերտների մեջ ձևավորել անկաշկանդ արտահայտվելու, զրուցելու, վստահորեն սեփական տեսակետն ու Խաչատրյան Հասմիկ կարծիքն արտահայտելու կարողություններ, խթանել նրանց ստեղծագործելու ցանկությունը: Աշակերտների անձնական փորձն ու ուսումնասիրությունները ուսուցչի կողմից պետք է ուղղորդվեն այնպես, որ նրանց մեջ ձևավորվեն բարձր բարոյականությամբ և մտավոր կարողություններ ունեցող անհատականություններ: Լավ ուսուցիչը, լավ մասնագետ լինելուց բացի, պետք է կարողա ճանաչել իր սաներին, դառնա նրանց ընկերն ու բարեկամը, ուղղորդի, հավատ ներշնչի ապագայի նկատմամբ:

Եզրակացություն

Երեխաների խոսքի զարգացումը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցչի, այլև մնացած բոլոր ուսուցիչների ու ամբողջ մանկավարժական կոլեկտիվի հոգածության առարկան պետք է լինի: Սխալ խոսելիս աշակերտներին պետք է ուղղել ամեն տեղ ու

ամենուրեք, որպեսզի նա ինքն իր լեզվի նկատմամբ մշտական հսկողություն սահմանի և խոսի այնպես, ինչպես պահանջվում է: Լեզվական միասնական պահանջներ պետք է սահմանել սկզբում դասարանի մասշտաբով, իսկ ապա՝ համադպրոցական, որովհետև դասարանում այդ անելն ավելի հեշտ է, իսկ մյուս կողմից՝ այդ փոքր միավորներից կստեղծվի նաև մեծը՝ համադպրոցականը: Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում պետք է կարևորել հատկապես արտադասարանային միջոցառումների, մրցույթների կազմակերպմանը, բանաստեղծությունների, հեքիաթների, առակների, պատմվածքների ինքնուրույն ընթերցանությանն ու իրենց բանավոր խոսքում որոշ դարձվածքների, առած-ասացվածքների թևավոր խոսքերի օգտագործմանը: Որպեսզի երեխան կարողանա իր խոսքը կառուցել գրագետ և հարուստ,պետք է կարևորել տվյալ խոսքում հոմանիշ-հականիշ զույգերի, ածականների և այլ լեզվաարտահայտչամիջոցների ճիշտ կիրառումը, որոնք խոսքը ավելի գեղեցիկ են դարձնում:

Այսպիսով՝ տարրական դասարաններում խոսքի զարգացման մեթոդիկայի գլխավոր խնդիրն է զարգացնել գեղեցիկ, գրագետ, հարուստ և հագեցած խոսք, որն էլ երեխային թույլ կտա առավել արտահայտիչ, պատկերավոր և ճիշտ կառուցել իր խոսքը: Այսպիսով, բանավոր խոսքը ոչ միայն մարդու կուլտուրական լինելու հիմնական չափանիշներից մեկն է, ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը:

Գրականության ցանկ

1. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980
2. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2009
3. Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան 1973

4. Խումարյան Վ., Բանավոր խոսքի զարգացման և խոսքի մշակույթի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներ, Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, N 5.2012, էջ 10-14:
5. Խաչատրյան Հասմիկ, Խոսքի զարգացման փոխհաջորդման սկզբունքը տարրական և միջին դասարաններում, էջ 473-482
6. Խաչատրյան Հասմիկ, Խոսքի զարգացման աշխատանքները տարրական դասարաններում՝ որպես միջին դասարանների աշակերտների խոսքի զարգացման անհրաշժեշտ նախապայման, էջ 298-306
7. https://vsu.am/grqer/2018/aprak/xachatryanhasmik.pdf
8. https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/xachatryanhasmik.pdf